

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԾՐԱԳԻՐ

ՍԵՐԱՍԻՈՅ ՎԵՐԱՇԽՆՈՒԹԵԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

1929 – 1930



Հիմնուած 1919-ին եւ

վաւերացուած Միացեալ Նահանգներու

Կառավարութեան կողմէ նոյն տարին:



ՆԵԽ ԵՈՐՔ


1929

362

Ս-33

362
U-338 ✓

1 MAR 2010



Ա. Ն.

Ս. Նշանի Վանիքը

1000
37868

ԿԱՆՈՆԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ

ԱՆՌՈՒՆ


Միութեանս անունն է ՍԵԲԱՍՏԻՈՅ ՎԵՐԱՇԻՆՈՒԹ-
ԹԵԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ :

ՆՊԱՏԱԿ

1. — Հայաստանի մէջ Նոր ՍԵբաստիա մը հիմնել:
2. — Սեբաստացիներու կրթական, բարոյական եւ
նիւթական բարելաւման սատարել, հայթայթելով բո-
լոր միջոցները, որոնցով կարելի կ'ըլլայ զիրենք ինք-
նապահ դարձնել:

ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Բարոյական եւ նիւթական անմիջական գոյնու-
թիւն հասցնել «Սեբաստիայէն» տեղադրուածունել թէ



29 JUL 2013

Սեբաստիոյ մէջ գտնուած կարօտ Հայերուն՝ մարմիններու միջոցաւ:

2.— Տարագրուած Սեբաստացիները յարմար միջավայրերու մէջ հաւաքել, եթէ իրենց ներկայ բնակավայրերը ապահով չեն:

3.— Երբ միջոցները կը ներեն Սեբաստիոյ մէջ վերականգնել Սեբաստիոյ բարեսիրական հաստատութիւնները (հիւանդանոց, դպրոց եւ որբանոց), հիմնել արհեստանոցներ չքաւորներու օգնելու համար:

4.— Սեբաստիոյ Վերաշ. Միութեան Կեղր. Վարչութիւնը եւ կամ Մասնաճիւղերու Վարչութիւնները որեւէ կուսակցական բնոյթ կրող ձեռնարկներու, պաշտօնապէս, պէտք չէ մասնակցին:

ԵԿԱՄՈՒՏ

Միութեանս եկամուտը պիտի կազմեն 1) Անդամակինարները, 2) Հանդանակութիւններ, 3) Նուէրներ, 4) Այս նպատակին համար սարքուած հանդէսներ, 5) Արհեստանոցներու արտադրութիւններէն գոյացած հասոյթներ և եւայլն:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1.— Ամէն «Սեբաստացի» կրնայ անդամակցիները:

2.— Որեւէ անհատ կրնայ պատուոյ անդամ դառնալ առնուազն 50 տոլար վճարելով, առանց քուէտառու եւ քուէտառու ըլլալու:

3.— Այս անդամները, որոնք 18 տարին լրացուցած են, կրնան քուէտառ եւ ստանալ:

4.— Ամերիկայի շրջանին մէջ իւրաքանչիւր անդամ պարտի վճարել ամսական 25 սէնթ, տիկնանց մասնաճիւղի անդամները պարտին վճարել ամիսը 10 սէնթ: Իսկ արտասահմանի մէջ, տեղին մասնաճիւղին որոշման համեմատ:

5.— Քուէ առնելու եւ տալու իրաւունքն ունին այն անդամները, որոնք Միութեանս անդամակցած են օրինաւորապէս, քուէտարկութենէն առնուադն երեք ամիս առաջ:

6.— Այն անդամը, որ մինչեւ մէկ տարի առանց բանաւոր պատճառի չի վճարեր իր անդամատուրքը, եւ իր բարոյական պարտաւորութիւնները եւս չի կատարեր, կը զրկուի քուէտալու եւ առնելու իրաւունքն, եւ եթէ իրեն անդամատուրքի համար եղած դիմումները անպատասխան թողու մինչեւ երկու տարի, յիշեալի անունը անդամոց ցանկն կը ձգուի:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

1.— Որեւէ քաղաքի կամ գիւղաքաղաքի մէջ, ուր առնուագն հինդ կամ աւելի Սեբաստացիներ կան, միասին գալով, Կեղրոնական Վարչութեան վաւերացումով, կրնան մասնաճիւղ մը կազմել:

2.— Տիկիններ կրնան զատ մասնաճիւղ կազմել, արանց մասնաճիւղերու աջակցութեամբ եւ Կեղրոնական Վարչութեան վաւերացումով:

3.— Անդամական ժողովները օրինական պիտի համարուին երբ քուէտառու անդամներու մէկ վեցերորդը եւ առնուադն 4 անդամ ներկայ ըլլան:

4.— Մասնաճիւղերի իրենց հասոյթի մէկ մասը տեղական անհրաժեշտ պէտքերու յատկացնելէ վերջ մնացածը պարտաւոր են կեդրոն զրկել:

5.— Ամէն մասնաճիւղ պարտի իր վեցամսեայ տեղեկագիրը եւ հաջուեկչիրը իր հասոյթին հետ, կեդրոնական Վարչութեան զրկել:

6.— Մասնաճիւղեր պարտին իրենց բացառիկ հասոյթները (հանդէսներէ, պարահանդէսներէ, դաշտային հանդէսներէ գոյացած զուտ շահերը, դրամական նուէրները, հանդանակութիւններու եւ վիճակահանութիւններու եւայլն այդ կարգի հասոյթներ), նոյնութեամբ եւ կարելի եղածին չափ չուտով, կեդրոն փոխադրել:

7.— Մասնաճիւղեր լուծուած կը համարուին երբ անդամներու թիւը հինգէն կը նուազի: Այդ պարագային մնացած անդամները պարտին իրենց քով գտնուած դրամը, գոյքը, եւայլն, յանձնել կեդր. Վարչութեան եւ իրենք կրնան դրացի մասնաճիւղին անդամակցիլ:

8.— Մասնաճիւղեր պէտք է իրենց բացառիկ կամ հանրային ձեռնարկները կեդրոնական Վարչութեան հետ խորհրդակցաբար ընեն:

9.— Մասնաճիւղերու վարչութիւնը կը բաղկանայ ընդհանուր ժողովներու մէջ ընտրուած Յէն 7 անձերէ, որոնք կ'ընտրեն իրենց դիւանը: Պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է եւ պաշտօնեաները վերընտրելի են:

10.— Վարչութեան պարտականութիւնն է կանոնադրի տրամադրութիւնները գործնականացնել եւ մաս-

նաճիւղի գործերը վարել, թղթակցութիւններ կատարել կեդրոնի հետ, եւայլն:

ա) Վարչութեան Ատենապետի պաշտօնն է ստորագրել պաշտօնական գրութիւնները Ատենադպրին հետ:

բ) Ատենապիրին պաշտօնն է անդամական եւ վարչական ժողովներու արձանագրութիւնները կազմել ու պահել, թղթակցութիւններ կատարել, եւ ստորագրել պաշտօնական գրութիւնները Ատենապետին հետ:

գ) Գանձապահին պաշտօնն է գանձուած անդամատուրքերու վոխարէն ստացագիր տալ, դրամական դուժառնութիւններու հսկել, մասնաճիւղի ծախքերը հոգալ եւ մասնաճիւղի ելեւմուտքի տոմարին մէջ մաքուր կերպով արձանագրել:

11.— Իւրաքանչիւր վարչութիւն իր տարեշրջանը լրանալուն պարտական է իր տեղեկագիրը ներկայացնել անդամական ժողովին:

12.— Իւրաքանչիւր մասնաճիւղ պարտական է առնուազն երեք ամիսը անդամ մը անդամական ժողով գումարել:

13.— Մասնաճիւղերու տարեշրջանը կ'սկսի Փետր. 1ին եւ կը վերջանայ Յունուար 31ին: Տարեգլխու հաշուեկիունները՝ վճարող անդամներու ցանկին հետ, պէտք է կեդրոն զրկուին՝ առ առաւելն մինչեւ Մարտ 15:

14.— Մասնաճիւղեր իրաւունք չունին միութեան դանձէն որեւէ ծախք ընել անհատական յարգանքներու համար:

15.— Երբ մասնաճիւղի մը մեծութեան պատճառվ, անդամատուրքերու գանձումի համար, գանձա-

պահի պաշտօնը կը ծանրաբեռնուի, մասնաւոր հաւաքիչ մը կը նշանակուի յարմար վարձագնով։

16.— Մասնաճիւղերը քոյր մասնաճիւղերու հետուզգակի յարաբերութեան մէջ մտնելու չեն, Միութեան Կեդրոնական Վարչութեան վերաբերեալ գործեռու չուրչ, բացի ստիպողական պարագաներէ, որոնց միջոցին, Կեդրոնական Վարչութեան իմացնելու են հարցը եւ շարժառիթը։

ԿԵՐՈՌԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.— Կեդր. Վարչութիւնը կ'ընտրուի դադտնի քուէով եւ Պատգմ. ժողովէն, կը բաղկանայ ինը անդամներէ՝ որոնք կ'ընտրեն իրենց դիւանը, եւ վերընտրելի են։

2.— Կեդրոնական Վարչութեան անդամներու պաշտօնափարութեան չրջանը մէկ տարի է եւ վերընտրելի են։

3.— Կեդրոնական Վարչութիւնը իր տարեշրջանը ըրանալէ, առնուազն ամիս մը առաջ, պարտաւոր է հրաւիրել Պատգամաւորական ժողովի բոլոր մասնաճիւղերը. Հակառակ պարզացին, երեք մասնաճիւղեր, Կեդր. Վարչութեան դիմում ընելէ ետք իրաւունք կ'ունենան Ընդհ. Պատգամաւորական ժողովի կանչելու։

4.— Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է իր տարեկան տեղեկադրութիւնը եւ հաշիւները տալ Պատգամաւորական ժողովին։

5.— Կեդրոնական Վարչութիւնը կը վարէ Միութեան դիւանական եւ հաշուական բոլոր գործառնութիւնները, եւ պատասխանատու է, թէ՛ անհատապէս

եւ թէ՛ հաւաքաբար իր բոլոր ձեռնարկներուն ու գործունէութիւններուն մէջ, Պատգմ. Ժողովին։

6.— Կեդրոնական Վարչութեան հրաժարող անդամներուն տեղը գրաւելու համար, կը կանչուին յաջորդ առաւելագոյն քուէ ստացողները ըստ կարգի։

7.— Կեդրոնական Վարչութեան անդամ մը նոյն ատեն չկրնար մասնաճիւղի վարչութեան անդամ ըլլալ։

8.— Կեդրոնական Վարչութիւնը հաւաքաբար, մէկ քուէով, կրնայ մասնակցիլ պատգամաւորական ժողովին, իր իրաւունքը յանձնելով իր անդամներէն մէկին. եւ Կեդրոնական Վարչութեան միւս անդամները՝ ներկայ կը գտնուին պատգամաւորական ժողովին ու կը մասնակցին վիճաբանութիւններուն իբր խորհրդատու։

9.— Դրամատունէն որեւէ գումար հանելու համար վճարագիրը (չէֆ) պէտք է ստորագրուած ըլլայ Ատենապետին ու Գանձապահէին կողմէ։

10.— Կեդրոնական Վարչութեան կեդրոնատեղին Պատգամաւորական ժողովին կ'որոշուի։

11.— Մասնաճիւղեր իրենց յարմար տեսած պարզացին, Կեդրոնական Վարչութեան լուր տալէ վերջ, կրնան մէկը գրկել Կեդրոնական Վարչութեան ժողովին ներկայ ըլլալու եւ տեղեկութիւններ առնելու։

12.— Միութեան գործատունները կը վարուին Կեդրոնական Վարչութեան կողմէ։

13.— Վերաշխնական Միութեան ձեռքին տակ գըտնուած չարժուն եւ անշարժ կալուածները (քէմբ, եւն., եւն.) Միութեանս Կեդրոնական Վարչութեան կողմէ կը գեկավարուին։

1.— Պատգամաւորական ժողովը պիտի գումարուի տարին անդամ մը, Մայիս ամսոյ մէջ: Իսկ երբ կեղրոնական Վարչութիւնը հարկ տեսնէ, կրնայ արտակարգ Պատգամաւորական ժողով գումարել մասնաձիւղերուն լուր տալիք երկու շաբաթ վերջ:

2.— Ամէն պատգամաւոր միայն մէկ ձայն կրնայ ներկայացնել: Մասնաճիւղեր միայն իրաւունք ունին իրենց պատգամաւորը ընտրելու, եւ անդամներ միայն կրնան պատգամաւոր ընտրուիլ:

3.— Իւրաքանչիւր մասնաճիւղ իրաւունք ունի իր քուէատու անդամներու թիւին համեմատութեամբ, պատգամաւորներ զրկելու Պատգամաւորական ժողովին: Հինգէն յիսուն անդամ ունեցող մասնաճիւղեր մէկ պատգամաւոր միայն կրնան ունենալ: Յիսուն եւ մէկէն հարիւր՝ երկու պատգամաւոր, եւ այսպէս մէկ պատգամաւոր իւրաքանչիւր յիսուն անդամի համար:

4.— Մասնաճիւղերու գանձէն կը հոգացուի պատգամաւորներու միայն ճանապարհածախսը:

ՎԵՐՋԱԲԱՆ

1.— Այս կանոնագրի յօդուածները կրնան վոփոխութեան ենթարկուիլ միայն Պատգամաւորական ժողովին կողմէ:

2.— Երբ Սերաստիոյ Վերաշինութեան Միութիւնը լուծուի, անոր բոլոր դրամներն ու գոյքերը պիտի զրկուին Ամերիկայի մէջ գոյութեան ունեղող ամենահղինակաւոր Սերաստացիական Նախաստամատոյց Ընկերութեան:

Մայիս 26, 1929



43. 331